

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/1

14 մայիսի 2013թ.

Քննարկվեց «Դի Ընդ Էյջ Գրուպ» ՍՊԸ 08.04.2013թ-ի դիմումով բերված գանգատը «ԿԱ ՊԵԿ Արթիկի ՏՏՏ 03.04.2013թ. թիվ 1008002 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 13.09.2012թ-ի թիվ 1008002 հանձնարարագրի «Դի Ընդ Էյջ Գրուպ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող «Օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է «ԿԱ ՊԵԿ Արթիկի ՏՏՏ 03.04.2013թ. թիվ 1008002 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 200.263.725 դրամ:

«Դի Ընդ Էյջ Գրուպ» ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

Նախքան բուն վերլուծությունը էական ենք համարում շեշտել, որ պարտավորությունը որը դարձել է ակտի առարկա՝ դեբիտորական է, այլ ոչ կրեդիտորական:

«Շահութահարկի մասին» «Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների համաձայն, ստուգվող կազմակերպության ինչպես տնտեսական միջոցները /ակտիվները/, այնպես էլ դրանց առաջացման աղբյուրները /պասիվները/ պետք է որակվեն որպես այդպիսիներ համաձայն «Գործող հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության: Մասնավորապես, համաձայն 11.03.2010թ. «Կառավարության թիվ 235-Ն որոշմամբ հաստատված ՀՀՄՍ 39 հավելված Ա, կիրառման ուղեցույց 35-ի ա/ ենթակետի դրույթներից հետևում է, որ ակտի հիմք հանդիսացող պարտքի գումարը, որը «ՄՕԲԻԼԵՔՍ ԷՆԵՐՋԻ ԹՌԵԻԴԻՆՆԳ ՊԻԵ ԼՏԴ» ՓԲԸ-ն պարտք է «Դի Ըն Էյջ Գրուպ» ՍՊԸ-ին՝ դեբիտորական պարտք է: Ի դեպ, ստուգող տեսուչներն ակտի 2-րդ կետում ևս նշել են, որ նշված պարտքը դեբիտորական պարտք է:

Այսպիսով, որպես ակտի իրավական հիմնավորում ստուգող տեսուչները վկայակոչել են «Կառավարության 19.12.2002թ. թիվ 2052-Ն որոշումը, որի առաջին պարբերությունը իմպերատիվ կերպով սահմանում է՝ «Շահութահարկի մասին» «Օրենքի 7-րդ հոդվածի երկրորդ մասի «ժե» և «ժզ» ենթակետերին ու 18-րդ հոդվածին համապատասխան «Կառավարությունը որոշում է. ... Այսինքն, որոշումը կարգավորում է բացառապես վերը թվարկված հոդվածները, այն է՝ դրանում մեջբերված մեկնաբանությունները, տերմինները, մոտեցումները կիրառելի են միայն վերը թվարկված հոդվածների կիրառման ժամանակ: Դիտարկենք առանձին-առանձին դրանք:

Ա/ «Շահութահարկի մասին» «Օրենքի 7-րդ հոդվածի երկրորդ մասի «ժե» ենթակետի սահմանումից հստակ երևում է, որ խոսքը գնում է կրեդիտորական, այլ ոչ թե դեբիտորական պարտքի մասին, այսինքն՝ դեբիտորական պարտքերի՝ որպես վաղեմության լրանալու հիմքով որևէ կերպ որակման անդրաձարձ առկա չէ,

Բ/ «Շահութահարկի մասին» «Օրենքի 7-րդ հոդվածի երկրորդ մասի «ժզ» ենթակետի սահմանումից հստակ երևում է, որ խոսքը գնում է նախկինում դուրս գրած դեբիտորական պարտքի մասին, որը մարվել է, և այս դեպքը ևս որևէ առնչություն չունի մեր դեբիտորական պարտքի հետ: Այսինքն՝ դեբիտորական պարտքերի՝ որպես հայցային վաղեմության լրանալու հիմքով որևէ կերպ որակման անդրաձարձ առկա չէ,

Գ/ «Շահութահարկի մասին» «Օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է համախառն եկամտի նվազեցումների առանձնահատկությունները, որը ևս որևէ առնչություն չունի դեբիտորական պարտքերի՝ որպես հայցային վաղեմության լրանալու հիմքով որևէ կերպ որակման հետ:

Նշվածից հետևում է, որ «Կառավարության 19.12.2002թ. թիվ 2052-Ն որոշումը չի առնչվում «Շահութահարկի մասին» «Օրենքի որևէ դրույթների, որոնք կվերաբերվեն ակտի

առարկային, այն է՝ հայցային վաղեմությունն անցած դեբիտորական պարտքը՝ որպես ներված պարտավորություն ճանաչելու և, այնուհետև, հարկային գործակալի եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկի պահման և բյուջե վճարման պարտավորության առաջադրման հետ:

Այժմ անդրադառնանք ստուգման ակտում, որպես հայցային վաղեմություն հիմնավորող հաջորդ իրավական ակտին՝ <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի հոդված 4-րդ, 5-րդ, 53-րդի 4-րդ մաս և 7-րդի 3-րդ մաս, ինչպես նաև որպես իրավական հիմք վկայակոչված <Ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին> հրահանգը հաստատելու մասին հարկային տեսչության 04.03.1999թ. թիվ 01/13 հրամանի 2.4.5 կետին:

Այսպիսով, ստուգման ակտում ներկայացրած վերոգրյալ իրավական հիմնավորումներից ոչ մեկը չի տալիս հստակ պատասխան, թե ինչպես է ճանաչվում դեբիտորական պարտավորության հայցային վաղեմության լրանալը պարտավորության ներում:

Ակտի ընթերցումից հասկացվում է, որ ստուգող տեսուչները, բացի նրանից, որ անհիմն կիրառել են ՀՀ կառավարության 19.12.2002թ. թիվ 2052-Ն որոշմամբ ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից հարկման մոտեցումների գնահատական տալու համար, նաև յուրովի են մեկնաբանել ՀՀ կառավարության 19.12.2002թ. թիվ 2052-Ն որոշման դրույթները, մասնավորապես, որոշմամբ հաստատված կարգի 3-րդ գլխի, որը կարգավորում է <կրեդիտորական պարտքի անհուսալի ճանաչելը> 24-րդ կետը, որը սահմանում է կրեդիտորական պարտավորությունների ներման մոտեցումները և անուղակի կարող է հայցային վաղեմության լրանալը նույնացվել պարտքն այլ ձևով չպահանջելու հասկացության հետ:

Ստուգող տեսուչներն անալոգիա են անցկացրել կրեդիտորական և դեբիտորական պարտավորությունների միջև և նույն դրույթները կիրառել դրանց նկատմամբ, ինչը հարկային հարաբերություններում արգելված է, համաձայն <իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի: Ստուգող տեսուչները նաև հաշվի չեն առել, որ <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետը 2012թ. գործող խմբագրությամբ ևս չէր կարգավորում դեբիտորական պարտավորություններին վերաբերող հայցային վաղեմության առաջացման վերաբերյալ նորմեր և այդ հարցին միայն անդրադառնում էր կրեդիտորական պարտավորությունների մասով, իսկ դեբիտորական պարտավորությունների պարբերությունն ավելացվել է 2013թ. ուժի մեջ մտած փոփոխությամբ:

Այսպիսով, ստուգող տեսուչները կիրառել են ՀՀ գործող օրենսդրությունը Սինգապուրի հանրապետությունում գրանցված սուբյեկտի նկատմամբ, այսինքն՝ սինգապուրյան ընկերության կողմից կրեդիտորական պարտքը մեր ընկերության նկատմամբ կարգավորել են ՀՀ գործող օրենսդրության նորմերով, ինչն արգելված է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն:

Բացի վերը նշվածից, ստուգող տեսուչները պետք է պարզեին արդյոք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-344-րդ հոդվածները տարածվում է ստուգվող օբյեկտի և ոչ ռեզիդենտի միջև հարաբերությունների վրա:

05.03.2009թ. Մատակարարման պայմանագրով համաձայնեցված չէ կարգավորող իրավունքը, պայմանագրում օգտագործված է <գործող քաղաքացիական օրենսդրություն> արտահայտությունը, առանց նշելու, թե որ պետության գործող քաղաքացիական օրենսդրության մասին է խոսքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1285 և 1287 հոդվածների պահանջների ներքո ստացվում է տվյալ մատակարարման պայմանագրի կապակցությամբ մի կողմից՝ մատակարար ոչ ռեզիդենտի և մյուս կողմից՝ կանխավճարի գծով սկզբնական պարտատեր <Երևանշին> ՍՊԸ-ին 29.10.2009թ. եռակողմ պայմանագրով փոխարինած նոր պարտատեր՝ <Դի Ընդ Էյչ Գրուպ> ՍՊԸ-ի միջև հարաբերություններում կանխավճարի մնացորդի գանձման հայցային վաղեմության հարցերը չեն կարող կարգավորվել ՀՀ գործող օրենսդրությամբ, այլ պետք է կարգավորվեն Սինգապուրի իրավունքով: Մինչդեռ ակտում Սինգապուրի քաղաքացիական օրենսդրությունը վկայակոչված չէ, որով խախտված են ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի երկրորդ մասի պահանջները:

Բացի վերը նշված փաստական և իրավական հանգամանքներից հատկանշական է նաև, որ Մատակարար ոչ ռեզիդենտի, <Երևանշին> ՍՊԸ և <Դի Ընդ Էյջ Գրուպ> ՍՊԸ-ի միջև 05.03.2009թ. Մատակարարման պայմանագրի լուծման վերաբերյալ 29.10.2009թ. կնքված եռակողմ պայմանագրից հետո փաստացի շարունակվել են մատակարարմանն ուղղված հարաբերությունները և 02.02.2010թ-ին ու 18.02.2010թ-ին <Երևանշին> ՍՊԸ-ի կողմից ոչ ռեզիդենտ մատակարարին վճարվել է ևս 3.000.000 ԱՄՆ դոլար կանխավճար: Այնուհետև, 29.03.2010թ. կողմերը կնքել են նոր եռակողմ պայմանագիր, որի 2-րդ կետով <կրկին> լուծել են 05.03.2009թ. Մատակարարման պայմանագիրը և <Երևանշին> ՍՊԸ-ից ոչ ռեզիդենտի ստացած 3.000.000 ԱՄՆ դոլարին համարժեք 1.133.500.000 դրամ կանխավճարի գծով կրեդիտորական պարտքի գծով պարտատիրոջ իրավունքները ևս փոխանցել <Դի Ընդ Էյջ Գրուպ> ՍՊԸ-ին: Այս գործարքի արդյունքում ոչ ռեզիդենտի պարտավորությունը վերադարձման ենթակա կանխավճարների գծով <Դի Ընդ Էյջ Գրուպ> ՍՊԸ-ի հանդեպ կազմել է սկզբնական 29.10.2009թ. պայմանագրով ամրագրված 4,146,388 ԱՄՆ դոլարին համարժեք 1,529,314,436 դրամին գումարած 3.000.000 ԱՄՆ դոլարին համարժեք 1,133,500,000 ՀՀ դրամ, ընդհանուրը՝ 2,662,814,436 դրամ, որն արտացոլված է <Դի Ընդ Էյջ Գրուպ> ՍՊԸ-ի 2010թ. և 2011թ. համար հանձնված շահութահարկի հաշվարկների 6-րդ աղյուսակի 10-րդ <Տրված կանխավճարներ> տողում նորացված դեբիտորական պարտավորությունը ընդհանուր 4.918581.0 հազ. դրամ, որից <ՄՕԲԻԼԵՔՍ ԷՆԵՐՋԻ ԹՌԵԻԴԻՆԳ ՊԻԵ ԼՏԴ>-ի նկատմամբ ունեցած պարտավորությունը՝ 2,662,814,436 դրամ է:

Վերը նշված նորացված պարտավորությունն ամրագրված է 01.04.2010թ-ին կողմերի միջև պարտավորությունների մարման ժամկետի երկարացման մասին համաձայնագրում և այդ համաձայնագրի կազմումը, որպես պարտքի ճանաչումը վկայող գործողություն, ինքնին ընդհատել է հայցային վաղեմության հաշվարկը՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340 հոդվածի: Ըստ այդմ՝ ոչ ռեզիդենտին ներման ձևով եկամուտ տալու փաստական հանգամանքը բացակայում է:

Եվ վերջապես, ստուգող տեսուչները հաշվի չեն առել այն փաստական հանգամանքը, որ <Դի Ընդ Էյջ Գրուպ> ՍՊԸ-ն 27.11.2012թ. կնքել է պարտավորությունների հաշվանցման եռակողմ համաձայնագիր, որի համաձայն <ՄՕԲԻԼԵՔՍ ԷՆԵՐՋԻ ԹՌԵԻԴԻՆԳ ՊԻԵ ԼՏԴ>-ի դեբիտորական պարտավորությունը <Դի Ընդ Էյջ Գրուպ> ՍՊԸ նկատմամբ հաշվանցվել է ընկերության նախկին սեփականատեր՝ Դավիդ Վարազյանի կրեդիտորական պարտքի հաշվին, այսինքն՝ ակտի առարկա հանդիսացող դեբիտորական պարտքը ենթադրյալ անհուսալի ճանաչման օրվա դրությամբ, այն է՝ 29.12.2012թ. օրվա դրությամբ, առհասարակ եղել է մարված:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արթիկի ՏՀՏ 03.04.2012թ-ի թիվ 1008002 ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով ընկերության ներկայացուցիչների ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

2007 թ-ի օգոստոսի 3-ին <Դի Ընդ Էյջ Գրուպ> ՍՊԸ-ի (հետայսու՝ Պատվիրատու) և <Երևանշին ԳԱՍ> ՍՊԸ (հետայսու՝ Կապալառու) միջև կնքվել է <Կապիտալ շինարարության կապալի պայմանագիր>: Հիմք ընդունելով պայմանագրի 3.1.9. կետը՝ 2009 թ-ի մարտի 2-ին Պատվիրատուն հանձնարարել է Կապալառուին <ՄՕԲԻԼԵՔՍ ԷՆԵՐՋԻ ԹՌԵԻԴԻՆԳ ՊԻԵ ԼՏԴ>-ի (գրանցված Սինգապուրում, հետայսու՝ Մատակարար) հետ կնքել թիվ EM/09 մատակարարման պայմանագիրը, համաձայն որի մատակարարը պետք է Կապալառուին մատակարարի ամրաններ 15 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ: Վերոհիշյալ գնումը իրականացնելու համար Պատվիրատուն Կապալառուին է փոխանցել 9.597.658 ԱՄՆ դոլար: 2009 թ-ի ընթացքում մատակարարին Կապալառուի կողմից փոխանցվել է 6.597.658 ԱՄՆ դոլար, որի դիմաց 2009 թ-ի հոկտեմբերի 29-ի դրությամբ Կապալառուի կողմից ստացված ապրանքների ընդհանուր արժեքը կազմել է 2.451.270 ԱՄՆ դոլար: 2009 թ-ի հոկտեմբերի 29

դրությամբ մատակարարի պարտքը Կապալառուին կազմել է 4.146.388 ԱՄՆ դոլար, որը կազմում է 1.529.314.436 ՀՀ դրամ: 2009 թ-ի հոկտեմբերի 29-ի դրությամբ Կապալառուի և մատակարարի միջև կնքված EM/09 մատակարարման պայմանագիրը համարվել է լուծարված մատակարարի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման անհնարինության պատճառով: 2009 թ-ի հոկտեմբերի 29-ին Պատվիրատուի, Կապալառուի և Մատակարարի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր, որի 3-րդ կետը սահմանում է. «Քանի որ գործարքը կատարվել է համաձայն 2007 թ-ի օգոստոսի 3-ի Պատվիրատուի և Կապալառուի միջև կնքված «Կապիտալ շինարարության կապալի պայմանագրի» 3.1.9. կետի և Պատվիրատուի 02.03.2009 թ-ի հանձնարականի Կապալառուի և Մատակարարի միջև կնքված թիվ EM/09 մատակարարման պայմանագրի, ուստի Մատակարարի կողմից ստացված կանխավճարի մնացորդ պարտքը առ 2009 թ-ի հոկտեմբերի 29-ը գումարով 1.529.314.436 ՀՀ դրամ Կապալառուից փոխանցվում է Պատվիրատուին և նույն գումարի չափով նվազում է Կապալառուի պարտքը Պատվիրատուին: Այդ գումարը Պատվիրատուի 2009 թ-ի հաշվապահական հաշվեկշռում ձևավորվել է որպես դեբիտորական պարտք Մատակարարից: Ըստ ներկայացված փաստաթղթերի, Պատվիրատուն ստուգվող ժամանակաշրջանում «ՍՕԲԻԼԵՔՍ ԷՆԵՐՋԻ ԹՌԷԻԴԻՆԳ ՊԻԵ ԼՏԴ»-ից չի պահանջել վերադարձնել տրամադրված կանխավճարը:

1. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներին համապատասխան ՀՀ-ում ոչ ռեզիդենտները շահութահարկ են վճարում հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից:

2. Տվյալ դեպքում նույն օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ մասի և «Ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 2.4.5-րդ կետի համաձայն՝ հայաստանյան աղբյուրների թվին են դասվում նաև անհատույց ստացված ակտիվների, պարտավորությունների զեղջումից կամ ներումից ստացված եկամուտները:

3. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ ցպահանջ կրեդիտորական պարտքերի հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է պահանջ ներկայացնելու օրվանից, բայց գարծարքի կատարմանը հաջորդող 61-րդ օրվանից ոչ ուշ:

4. ՀՀ կառավարության 19.12.2002թ.-ի թիվ 2052-Ն որոշման 4-րդ կետի 3-րդ պարբերությունը սահմանում է, որ այն դեպքում, երբ սահմանված չէ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետ, ինչպես նաև ցպահանջ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի դեպքում, դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետ է համարվում այդ պարտքը առաջացնող գործարքի (գործառնության, փաստի) կատարման օրվան հաջորդող 60-րդ օրը:

5. ՀՀ կառավարության 19.12.2002թ.-ի թիվ 2052-Ն որոշման 3-րդ գլխի 24-րդ կետը սահմանում է, որ կրեդիտորական պարտքի ներման կամ այլ ձևով պարտքը չպահանջելու վերաբերյալ պարտադիրորոշ որոշման կամ համաձայնության, կամ երրորդ անձին պարտքի անհատույց փոխանցման դեպքում՝ նվիրված կամ անհատույց փոխանցված գումարի չափով ավելացվում է կազմակերպության հաշվետու տարվա համախառն՝ եկամուտը, եթե մինչ այդ այն չի դիտվել որպես անհուսալի:

Տվյալ դեպքում պարտքի վաղեմության ժամկետը լրացել է 2012թ.-ի դեկտեմբերի 29-ին (գործարքը կատարվել է 29.10.2009թ.-ին, 61-րդ օրը լրանում է 29.12.2009թ.-ին, 3 տարին լրանում է 29.12.2012թ.-ին):

Հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածի 1-ին կետի, 66-րդ հոդվածի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-25-րդ հոդվածների դրույթները ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով բյուջե լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 200.263.725 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետով արձանագրված խախտումների և դրա հետևանքով ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով առաջադրված պարտավորությունների վերաբերյալ հարկ է նշել հետևյալը:

Ստուգման ակտի 2-րդ կետում հիշատակված իրավանորմերի, այն է՝ <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ հոդվածների, 7-րդ հոդվածի 3-րդ մասի, 53-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.12.2002թ. թիվ 2052-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ գլխի 24-րդ կետի դրույթներից հետևում է, որ դրանցից ոչ մեկը չի տալիս հստակ պատասխան, թե ինչպես է ճանաչվում դեբիտորական պարտավորության հայցային վաղեմության լրանալը պարտավորության ներում, այն դեպքում, երբ ակտի հիմք հանդիսացող պարտքի գումարը, որը <ՄՕԲԻԼԵՔՍ ԷՆԵՐՋԻ ԹՌԵԻԴԻՆԳ ՊԻԵ ԼՏԴ>-ն պարտք է <Դի Ընդ էյջ Գրուպ> ՍՊԸ-ին՝ դեբիտորական պարտք:

Քննարկվող դեպքում <ՄՕԲԻԼԵՔՍ ԷՆԵՐՋԻ ԹՌԵԻԴԻՆԳ ՊԻԵ ԼՏԴ>-ի ոչ ռեզիդենտի, <Երևանշին> ՍՊԸ և <Դի Ընդ էյջ Գրուպ> ՍՊԸ-ի միջև 05.03.2009թ-ին Մատակարարման պայմանագրի լուծման վերաբերյալ 29.10.2009թ. կնքված եռակողմ պայմանագրից հետո, ըստ էության, շարունակվել են մատակարարմանն ուղղված հարաբերությունները, այն է՝ 02.02.2010թ-ին ու 18.02.2010թ-ին <Երևանշին> ՍՊԸ-ի կողմից ոչ ռեզիդենտ մատակարարին վճարվել է ևս 3.000.000 ԱՄՆ դոլար կանխավճար: Այնուհետև, 29.03.2010թ-ին կողմերը կնքել են նոր եռակողմ պայմանագիր, որի 2-րդ կետով <կրկին> լուծել են 05.03.2009թ. Մատակարարման պայմանագիրը և <Երևանշին> ՍՊԸ-ից ոչ ռեզիդենտի ստացած 3.000.000 ԱՄՆ դոլարին համարժեք 1.133.500.000 դրամ կանխավճարի գծով կրեդիտորական պարտքի գծով պարտատիրոջ իրավունքները ևս փոխանցվել են <Դի Ընդ էյջ Գրուպ> ՍՊԸ-ին: Արդյունքում ոչ ռեզիդենտի պարտավորությունը <Դի Ընդ էյջ Գրուպ> ՍՊԸ-ի հանդեպ կազմել է 1.529.314.436 դրամին գումարած 1.133.500.000 դրամ, ընդհանուրը՝ 2.662.814.436 դրամ: Ընդ որում, վերջինս արտացոլվել է <Դի Ընդ էյջ Գրուպ> ՍՊԸ-ի 2010թ. և 2011թ. համար հարկային տեսչություն ներկայացված շահութահարկի հաշվարկների 6-րդ աղյուսակի 10-րդ <Տրված կանխավճարներ> տողում: Մասնավորապես, նորացված դեբիտորական պարտավորության ընդհանուր գումարը կազմել է 4.918581.0 հազ. դրամ, որից <ՄՕԲԻԼԵՔՍ ԷՆԵՐՋԻ ԹՌԵԻԴԻՆԳ ՊԻԵ ԼՏԴ>-ի նկատմամբ ունեցած պարտավորությունը՝ 2.662.814.436 դրամ է:

Վերը նշված նորացված պարտավորությունն ամրագրված է 01.04.2010թ-ին կողմերի միջև պարտավորությունների մարման ժամկետի երկարացման մասին համաձայնագրում և այդ համաձայնագրի կազմումը, որպես պարտքի ճանաչումը վկայող գործողություն, ինքնին ընդհատել է հայցային վաղեմության հաշվարկը՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340 հոդվածի: Նման պայմաններում, ոչ ռեզիդենտին ներման ձևով եկամուտ տալու հանգամանքը, ըստ էության, բացակայում է:

Իր հերթին, անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ <Դի Ընդ էյջ Գրուպ> ՍՊԸ-ն 27.11.2012թ. կնքել է պարտավորությունների հաշվանցման եռակողմ համաձայնագիր, որի համաձայն <ՄՕԲԻԼԵՔՍ ԷՆԵՐՋԻ ԹՌԵԻԴԻՆԳ ՊԻԵ ԼՏԴ>-ի դեբիտորական պարտավորությունը <Դի Ընդ էյջ Գրուպ> ՍՊԸ նկատմամբ հաշվանցվել է ընկերության նախկին սեփականատերի կրեդիտորական պարտքի հաշվին:

Վերոգրյալից ըստ էության հետևում է, որ ակտի կազմման համար հիմք հանդիսացող դեբիտորական պարտքը ենթադրյալ անհուսալի ճանաչման օրվա, այն է՝ 29.12.2012թ-ի դրությամբ, եղել է մարված:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ կրեդիտորական պարտքի հաշվարկը S 03.04.2013թ. թիվ 1008002 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ